Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել սոկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ивановой Дарьи
Егоровны
Учительницы
начальных
классов

1
209

1923

ԱՂՕԹՔ

«ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»

ՏԵԱՌՆ

Ս. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐ

1923

591 99
6 63

63411-67
891.99 [illegible]
h-63 [illegible]
[illegible]
VIIH 781 14/XI
VIIH-781 6/II 81
Ալ-2496 20/III 81
999 11/III-86

-6 NOV 2011

"ՀԱՅԱՍՏԱՆ"



ԱՂՕԹՔ

‘ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ„

ՏԵԱՌՆ

Ս. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐ

1923

11.07.2013

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ԻՐԱՔԱՆՉԻՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ՁՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է Ս. ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ա.

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց։

ՀՍՍՀ-ԱՄՍՍՀ
1-209ահ
63477-67

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԱՂՕԹՔԻ Ս. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Ա.

Հաւատքով, Տէր իմ, ըզքեզ
Կը դաւանիմ պընդապէս,
Եւ սիրավառ, յուսալիր
Կ'երկըրպագեմ ծընրադիր՝
Երրորդութեանդ համագոյ
Հօր և Որդւոյ և Հոգւոյ,
Բնութիւն անմահ և անեղ,
Ստեղծող իրաց սիրազեղ,
Հրեշտակներու և մարդկան
Հաստիչ և կեանք և վախճան.
Ողորմէ՝ ամէն արարածներուդ
Որ քեզ կ'աղերսեն, ով Տէր բարեգութ։

Բ.

Հաւատով խոստովանիմ, և երկիր պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ի հաճոյս, և ընդունել ի քէն զխընդրուածս իմ. ողորմեա ինձ բազմամեղիս։

Բ.

Աստուած միակ և երրեակ,
Լոյս անբաժան, միասնեակ,
Քեզ կը դիմեմ յուսալիր,
Կ՚երկրրպագեմ ծընրադիր.
Լուսոյ ստեղծող հրաշալի
Եւ հալածիչ խաւարի,
Մեղքի խաւարն հոգիէս
Փարատէ այս վայրկենէս,
Լոյսըդ մըտքիս մէջ վառէ՝,
Խընդիրքս յօժար կատարէ.
Ո՛վ դու ամենուն ապաւէն և յոյս,
Ողորմէ՝ և իմ բազմամեղ հոգւոյս։

Գ.

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ ըզպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Գ.

Ո՛վ Հայր, Աստուած ճշմարիտ,
Որ սիրելի քու Որդիդ
Ուղարկեցիր հոս աշխարհ՝
Փընտռել ոչխարքս մոլար,
Երկընքի դէմ, քեզի դէմ
Մեղանչեցի ես դըժխեմ.
Արդ անառակ որդւոյն պէս
Կը թախանձեմ սըրտակէզ,
Մեղքէն կապտուած իմ նախկին
Զգեստս ինձ հագցուր վերըստին.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

Դ.

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ. վասն մերոյ փրկութեան խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց և համբարձար առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Դ.

Որդիդ՝ Աստուած ճշմարիտ,
Առիր մարմին փրկառիթ
Մեզ՝ ի Ջնելով Հօր ծոցէն
Մարեմայ ծոցն հողեղէն.
Որ խաչուեցար, թաղուեցար,
Յարեար, երկինք վերացար,
Մեղայ Երկնի դէմ, քու դէմ.
Աւազակին հետ գոչեմ՝
«Արքայութեան փառքով՝ զիս
Երբ գաս՝ յիշէ՝ եղկելիս».
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

Ե.

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ե.

Հոգիդ՝ Աստուած ճշմարիտ,
Որ վկայեցիր Էակցիդ
Աղաւնակերպ ի Յորդան,
Հրաբոց լեզուօք Վերնատան,
Աւազանին սուրբ Ջրով զիս
Փայլեցուցիր լուսակիզ.
Բայց ես մեղայ կըրկնակի՝
Թէ՛ քեզի, թէ՛ երկընքի.
Առաքելոց պէս զիս ալ՝
Մաքրէ՛ բոցովդ երկնափայլ.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

Զ.

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քո սրբոյ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Զ.

Անեղ բնութիւն, թշուառ եմ,
Մեղանչեցի քեզի դէմ,
Հոգւով, մրտքով ու մարմնով
Զիս ըրի գարշ մեղքի ծով։
Ո՜հ, մի՛ յիշեր՝ զագրագին
Բիւր յանցանքներս առաջին,
Անոնց հետքերն ալ իսպառ
Ջընջէ՛ ինծմէ տիրսբար,
Եւ սուրբ անուանդդ՝ մաքուր
Դրոշմը վրրաս փայլեցուր,
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

Է·

Տեսող ամենայնի՝ մեզայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. Ընչեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Է·

Համայնատես աչք, ամէն
Գաղտնիք քեզի յայտնի են,
Կը թափանցես մարդկային
Սըրտի խորշերը մըթին,
Գիտես թէ ո՞րքան խոհեր
Մըտածմունք, խօսք ու գործեր
Չիս պըղծեցին մինչ այսօր.
Մեղքերուս գիրը բոլոր
Ջընջէ՝, անունըս՝ լուսէջ
Դրոշմէ՝ կեանքի գըրքին մէջ.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՝ և իմ բազմամեղ հոգւոյս։

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
(23777-27)
1-209ահ

Ը.

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն չնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ը.

Քննող գաղտնեաց ծածկատես,
Ցանդըգնօրէն մեղայ քեզ
Անգիտաբար և գիտակ,
Կամաւ, կամքիս հակառակ՝
Աստուածութեանդդ դիմաց.
Քաւէ՛ հոգիս մեղսամած.
Աւազանին ծնընդենէն
Կեանքիս մինչև այս րոպէն՝
Զգայարանքներըս չարուս
Ըրի գործիք մեղքերուս։
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

Թ.

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յարատ, և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զչարժումն սոցա՝ լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա քո ապարատոց և ինձ բազմամեղիս։

Թ.

Խնամոդդ՝ աչքիս պահապան
Դիր վախդ՝ յայրատ չըտեսնան.
Տուր ականջներըս խորշին
Լըսելէ բան պիղծ ու սին.
Հալածէ՛ սուտը բերնէս,
Զար խորհուրդները սըրտէս.
Ձեռքս անիրաւ գործելէն,
Ոտքերըս չար ուղիէն
Շեղէ՛, և տուր շարժումնին
Օրէնքներուդ յարմարին.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

Ժ.

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ժ.

Կենդանի հուրըդ Քրիստոս,
Թող սիրոյդ բոցն երկնահոս՝
Որով աշխարհիս խաւար
Հերդեհեցիր լուսավառ՝
Զիս ալ կիզէ հրատոչոր,
Այրէ հոգւոյս աղտն ու բոր,
Խղճիս ժանտ կեղը սրբէ,
Մարմնոյս մեղքերը մաքրէ,
Եւ գիտութեանդ լոյսին մէջ
Վառէ սրտիս ջահն անշէջ.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԱ.

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԱ.

Իմաստութիւն Հօր՝ Յիսուս,
Գիտութեան բովք ամենուս,
Իմաստութեանդդ գանձէն
Տուր ինձ բաժին, որ ամէն
Ժամ քու առջեւդդ բարի՛
Խորհուրդներ միտքըս ծնանի.
Բարի գործեմ ու խօսիմ,
Իբրև ըզգօն և ուշիմ.
Չար խօսքերէ, մտածմունքէ
Չար գործերէ զիս փրկէ՛.
Արարածներուդ ողորմութեան յոյս
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԲ.

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԳ.

Տէր մարդասէր, որ անհուն
Գութ կը տածես ամենուն,
Մի լքաներ, մի թողուր
Որ ես ըլլամ անձնատուր
Իմ կամքիս ձեռքն ապիրատ,
Որ զիս ձրգէ խորխորատ.
Այլ ընթացքիս ուղիղայ
Թող բարեսէր կամքդ ըլլայ,
Եւ միշտ ուղիղս քալեն
Քեզմէ գրծուած ուղիէն.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԳ.

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ առել զմեղս և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԳ.

Ո՛վ դու արքայ երկնային,
Արքայութեանըդ փառքին՝
Զոր խոստացար տալ ըզքեզ
Պաշտողներուն սիրակէզ՝
Զիս ալ ըրէ՛ արժանի.
Զօրացուր սիրտս՝ առելի՛
Մեղքէն զըզուիլ, և անգին
Սիրոյդ ըղձալ կաթոգին,
Ապրիլ, գործել մի միայն
Քու սուրբ կամքիդ համաձայն.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԴ.

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց և ի փորձութեանց դիւաց և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԴ.

Ո՛վ Տէր, խնամող բարեգութ
Ամէն ստեղծած բաներուդ,
Հոգիս, մարմինս ապահով
Ըրէ՛ խաչիդ նշանով,
Խաբեպատիր ակնախտիտ
Հրապոյրներէ մեղսառիթ,
Դիւին լարած հաղբերէն,
Մարդիկներէ անօրէն,
Հոգւոյ, մարմնոյ բիւր հազար
Վտանգներէ ճնաստակար.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

Ժե.

Պահապան ամենայնի Քրիստոս, աչ քո հովա
նի լեցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի,
նստել ի տան և ի գնալ ի ճանապարհ, ի նըն
ջել և ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Ժե.

Քրիստոս Աստուած պահապան
Ամէն իրի ստեղծական,
Զըգէ սուրբ աչդ ահաւոր
Վրաս հովանի մըշտազօր.
Օր ու գիշեր անդադար
Եղիր անձիս խնամատար
Թէ տան մէջ թէ բացակայ,
Քաղաքն և կամ ճամբու վրայ,
Թէ քուն ըլլամ թէ արթուն՝
Մնամ անսասան, աննըկուն.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԶ.

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

ԺԶ.

Աստուած իմ, լոյս անարատ,
Որ կը բանաս ձեռքդ առատ,
Ողորմութեանդդ զանձով
Երկինք, երկիր լեցնելով,
Քեզ կը յանձնեմ զիս բոլոր
Եւ ինչ է ինձ կարևոր,
Դու հոգա՛, դու պատրաստէ
Հոգւոյս, մարմնոյս ինչ պէտք է,
Ոչ միայն այս վայրկենիս,
Այլ մինչ յետին շունչ կեանքիս.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս:

ԺԷ.

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, և բեւեռեա հոգի իմ զսոսկալի օր մահուն և զերկիւղ գեհենոյն և զսէր արքայութեան քո, զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԷ.

Մոլորածները դու, Տէր,
Կը դարձընես սրրբասէր,
Դարձուր, ուղղէ ի բարին
Ախտերս ամէն մոլեգին,
Արքայութեանըդ սիրոյն
Հետ՝ բևեռէ պընդագոյն՝
Օրհասին վախն հոգւոյս մէջ
Եւ գեհենին հուրն անշէջ,
Որ լամ մեղքերս զազիր,
Գործեմ բարին անձանձիր.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԸ.

Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ արտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԸ.

Անմահութեան դու աղբիւր,
Որ կը բըխես բիւրաբիւր
Շնորհքի գետեր քաւչական՝
Որ երկրիս աղտը լուանան,
Աղբիւրացո՛ւր իմ սըրտէս
Ա՛յ զըղջումի աղեկէզ
Արցունքի յորդ հեղեղներ,
Որ պոռնըկին նըման՝ դեռ
Այս աշխարհէս չըմեկնած՝
Լըւամ հոգիս մեղսամած.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԺԹ.

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործովք, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԺԹ.

Տէր, պարգևիչ երկնային
Ողորմութեանդդ գանձին,
Կ'աղաչեմ՝ ինձ ալ տայիր
Գանձարանէդ մասն ընտիր,
Որ ուղղափառ հաւատքով
Գամ դէպ ի քեզ և քու քով,
Ուսիս շալկած լիաբեռ
Բարեպաշտ չատ մը գործեր,
Հաղորդութեամբ՝ օթևան
Եղած Մարմնոյդ և Արեան.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

Ի.

Բարերար Տէր, հրեշտակի բարոյ յանձն ա-
բասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի
իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այ-
սոցն՝ որ են ի ներքոյ երկնից. և ողորմեա քո
արարածոց և ինձ բազմամեղիս։

Ի.

Ո՛վ քաղցրը Տէր բարերար,
Երբ հասնի ժամս հոգեվար՝
Յանձնէ բարի հրեշտակին՝
Մօտ գայ մահճիս սընարին,
Որ աւանդեմ քաղցրօրէն
Հոգիս իր ձեռքն երկնագէն,
Եւ հետս ընկեր ըլլալով՝
Ձիս անցընէ անխռով
Երկընքի տակ թափառուն
Ջոլիրէ չար դևերուն.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԻԱ.

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ՝ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԻԱ.

Ո՛վ Քրիստոս՝ լոյս ճշմարիտ,
Արժանացուր քու փառքիդ
Լոյսը տեսնէ խեղճ հոգիս՝
Երբ ինձ հասնի աւետիս
Երկնահրաւէր կոչումին.
Եւ մինչև օրը վերջին
Դատաստանիդ ընդհանուր՝
Արդարներուն քով ինձ տուր
Հանգչիլ, յուսով հաստատման
Բարիքներուդ անվախճան.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԻԲ.

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԻԲ.

Երբ գաս, արդար Դատաւոր,
Դատել մարդիկ՝ փառօք Հօր,
Ծառայիդ հետ խոստիս մի՛
Մտներ, խընդրեմ, Տէր, դատի.
Մի՛ տար հոգիս իմ աւար
Դժոխքի կրակին մշտավառ.
Երանաւէտ կոչումի՛
Զայնդ ինձ ըրէ՛ լսելի՝
«Եկո՛ւր, սրբոց հետ ընտիր՝
Արքայութիւնըս մըտի՛ր».
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։

ԻԳ.

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, և դարձո զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին և նոքա. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

ԻԳ.

Ամենողորմ Տէր, անհուն
Գութըդ ցըցուր ամենուն՝
Որոնք քեզի կը հաւատան,
Թէ՛ համարիւն ինձ ըլլան,
Թէ՛ ծանօթ, թէ՛ այլազգի,
Կենդանի կամ լուսհոգի.
Զիս առողին ալ, ով Տէր,
Քաւէ. չար կամքն ու մեղքեր,
Որ արժանի գըտնըւին
Ողորմութեանըդ գանձին.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս։



ԻԴ.

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփանոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց և մարգարէից և վարդապետաց և մարտիրոսաց և սրբոց հայրապետաց, և ճգնաւորաց և կուսանաց և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԻԴ.

Փառաւորեալ օրհնեալ Տէր,
Մի խընդրուածքս մերժեր,
Բարեխօս ինձ համար քեզ՝
Սուրբ Կոյսն է, մեծն Յովհաննէս,
Նախավրկայն և իր հետ
Գրիգոր մեր լոյս հայրապետ,
Հին օրէնքին վեհ Սուրբեր,
Նորին՝ վկաներն անվեհեր,
Երկնի, երկրիս անհամար
Սրբամաքուր հոգւոց պար.
Եւ քեզ՝ անբաժան Սուրբ Երրորդութեան՝
Երկրպագութիւն և փառք յաւիտեան։

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ս. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0350854

1 C W